

ԽՄ ԱՇԱԽԱՍԱՆՔԻ ԾԵՔՓՈՒՅԱՆ ԹԱՐԳՄՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎՐԱ

1920 թվի հոկտեմբերին, երբ Կարաբեիրի գործերը մասն Ղարս, եւ որբանոցումն էի և սովորում էի երրորդ դասարանում: Մի անգամ Ղարսի ձորով անցնելիս մտա մի ավերված հայկական գրախանութ: Հայ գրողների գրվածքների հետ գեանին տարածված էին Շեքսպիրի հայերեն առաջին թարգմանությունները՝ սվինահար և հրկիզված, այնտեղ էին «Լիր թագավորը», «Համլետը», «Մահերեթը», «Ռոմեո և Ջուլիետը»: Մովսես Խորենացու «Հայոց պատմության» կողքին վիրավոր անքում էր «Վենետիկի մավրը»: Բարբարոսի սվինը խոցել էր մի վիթխարի ճակատ, որի տակ հայերեն տառերով գրված էր «Վիլյամ Շեքսպիր»:

Այդ եզավ իմ առաջին հանդիպումը Շեքսպիրի հետ: Երկրորդ անգամ Շեքսպիրին հանդիպեցի Լենինականի Պոլիգոնի գրադարանում՝ 1925-ին: Ամերիկայից անդերեն գրքեր էին ստացվել, մեկի վրա հեղելով կարգա-  
յի Shakespeare, «Julius Caesar» («Հուլիոս Կեսար»):

Տասնչորս տարի անց, Մոսկվայի օտար լեզուների ինստիտուտի հան-  
րակացարանում նստած ես սկսեցի թարգմանել հենց այդ ողբերգություն-  
նր՝ «Հուլիոս Կեսարը»: Ինձ ոգևորում էին Բրուտոսի և Անտոնիոսի ճա-  
ները: Մի բանի անգամ մշակեցի իմ թարգմանությունը, աշխատելով որ-  
բան կարելի է հարադատ մնալ բնագրին: Շեքսպիրի կատարած իմ անդ-  
րանիկ թարգմանությունը լույս տեսավ Երևանում 1944-ին:

Արդեն քսանհինգ տարի է, որ ես իմ գրական աշխատանքին զուգըն-  
թաց աշխատում եմ Շեքսպիրի թարգմանությունների վրա: Իմ թարգմա-  
նությունները մինչև այսօր լույս են տեսել վեց կոմեդիա և յոթ ողբերգու-  
թյուն:

Վերջերս ավարտեցի «Կորիոլանի» թարգմանությունը:  
Հիմա թարգմանում եմ «Ռիչարդ Երկրորդը»:

Իմ թարգմանական սկզբունքն այս է. առանձին անհաշող նախադասությունները չեն, որ որոշում են թարգմանության որակը: Թարգմանության մեջ կարևորը շունչն է, այն ավյունը, որով թարգմանվում է տվյալ գրվածքը:

Ամենալավն այն է, եթե մենք թարգմանված երկը համեմատենք անտառի հետ: Ինչպես որ փոթորկից տապալված մի քանի ծառ չեն կարող ազդել անտառի գեղեցկության վրա, թեև տեղ-տեղ կարող են դժվարացնել անցումը, այնպես էլ գրքում տապալված մի քանի նախադասություն չեն կարող նսեմացնել լավ թարգմանության հմայքը, թեև ընթերցողը կարող է սայթաքել դրանց դիպչելիս:

Ասել թե լավ թարգմանությունը միայն բծախնդիր աշխատանքի արդյունք է՝ ճիշտ չի լինի, որովհետև կան շատ բծախնդիր գրողներ և բծախնդիր թարգմանիչներ, որոնք ստեղծում են անտառը, ուր բոլոր ծառերը կանգնած են իրենց տեղում, նույնիսկ կոտրված ճյուղեր չկան, բայց անտառը բույր շունի, այնտեղ կենդանություն չկա, տերևները չեն սոսափում, հավքերը լուռ են:

Ուրեմն, ինչպես Հովհաննես Թումանյանն է ասում, «...Լեզվի հաշող փոխառությունն ու ճիշտ թարգմանությունը մեծապես տաղանդի ու շնորհքի գործ են դառնում»: Եվ բանաստեղծը հասկացող ու կիրթ ճաշակի տեր մարդկանց խորհուրդ է տալիս «խոսելիս թե գրելիս, փոխառնելիս թե թարգմանելիս զգուշ լինել ու բարեխիղճ, որովհետև ամեն մի հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մի մեծ ստեղծագործություն է ու մի ամբողջ աշխարհք»\*:

Ես իմ թարգմանության ժամանակ միշտ հետևել եմ այս սկզբունքին: Ես նույնպես կիրառում եմ յամբը և կարող եմ ասել, որ այդ չափը կարծես ստեղծված է Շեքսպիրին հայերեն թարգմանելու համար:

Ինձ համար, իբր բանաստեղծի, ոչ մի դժվարություն չի ներկայացնում Շեքսպիրի չափածոյի թարգմանությունը, եթե իմաստը հասկանալի է: Երբեմն պատահում է, որ նրա արձակի որոշ մասերը ավելի դանդաղ են թարգմանվում, քան թե չափածոն:

Այդ արձակը, որ մեջընդմեջ հաջորդում է չափածոյին, երբեմն նոսր, կամ երբեմն էլ շատ թանձր շերտով, չափածոյի պես մի բան է, մի տեսակ արձակ բանաստեղծություն: Հեղինակը սովորաբար չափածոյի է դիմում երբ «դժվարին» կամ «խորդուբորդ» տեղեր կան անցնելու: Ինչպես որ լեռնալանջով կամ արձակ դաշտով քառատրոփ վազող նժույզը

\* Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. IV, 1951, էջ 375:

Հանկարծակի մտնում է մի լեռնանցքի մեջ, կամ հարկադրվում է գնալ նեղ ու քարքարոտ Հանապարհույ և ստիպված է դանդաղեցնել յուր քայլերը, որոնց մեջ երկար ժամանակ զգացվում է քառատրոփ վաղբի ուրիշներ, աչքպես էլ Շեքսպիրը շափածոյից արձակի անցնելով չի կարողանում անմիջապես գտնել յուր ուրիշմական վաղբը: Նա իր արձակ խոսքի մեջ երկար ժամանակ զգալ է աալիս բանաստեղծական շեշտը և նրա աստիճանաբար անհետացող ներքին ուրիշներ, որը հետզհետե ուժեղանալով փոխվում է շափածոյի և ձիավորը նեղ, քարքարոտ տեղերը անցնելով, վերստին հայտնվում է լայնարձակ դաշտում՝ քառատրոփ վաղբի համար: Այդ է պատճառը, որ մի շարք հրատարակություններում հեղինակի որոշ տողերը համարակալվել են իրրև բանաստեղծություն, իսկ սմանք այդ միևնույն տողերը վերագրել են նրա արձակ մասին:

Չնայած դժվարություններին, մենք սիրով ենք թարգմանում Շեքսպիրին, մի հեղինակ, որի ծնունդը և գոյությունը քննադատները համեմատել են բնության երկրորդ ստեղծագործության հետ:

Իմ թարգմանությունները ևս բարձրաձայն կարգում եմ մի քանի անգամ, սող առ սող, պարբերություն առ պարբերություն: Եթե ինձ չի գոհացնում, ջնջում եմ և նորից եմ թարգմանում: Մակդիները հուզական ջերմություն են հաղորդում տղին, ինչպե՞ս կարելի է դրանց կողքով անտարբերությամբ անցնել: Ես բժախնդրությամբ հետևում եմ ամեն մի բառի ու նույնիսկ հնչյունի ներգործության ուժին բնագրի սվլյալ նախադասության մեջ, աշխատելով գտնել յուրաքանչյուր բառի կամ մակդիրի լրիվ համարժեքը մայրենի լեզվի մեջ, որովհետև ինչպես Շեքսպիրն է ասում, «նրանք, ովքեր թեթևամտությամբ են խաղում բառերի հետ, հեշտությամբ կարող են նրանց իսկական իմաստը փոխել»:

Ես թարգմանում եմ արդի հայերենով, օգտագործելով մեր հին և նոր լեզվի հարուստ բառապաշարը: Ի դեպ է ասել, որ իմ օգտագործած անգլոհայ բառարաններից մեկը հրատարակվել է 1321 թվին Վենետիկում: Այդ բառարանը կազմել է Բայրոնի հայոց լեզվի ուսուցիչ Հարություն Ավգրյանը, և այդ գործին մասնակցել է նաև Բայրոնը: Դա մի դարմանալի ձոխ բառարան է և, ի բախտավորություն ինձ, պարունակում է շեքսպիրյան անգլերենի գրեթե ամբողջ բառամթերքը հայերեն բացատրությամբ և հոմանիշների ընդարձակ ցանկով:

Ես ուշադրություն եմ դարձնում, որ թարգմանությունը ոչ միայն հարադատ լինի բնագրին, այլև լավ հնչի հայերեն, ոտանավորը սահուն կարդացվի, զգացվեն նաև շեքսպիրյան արձակի ներքին ուրիշները: Ես

բնագրի ժողովրդական դարձվածքների և ոճերի համար երբեմն օգտագործում են հայկական ժողովրդական որոշ ոճեր ու դարձվածքներ: Շեքըսպիրի որոշ անուններին և տեղանուններին հայկական երանդ են տալիս, մի քիչ տեղայնացնում են: Կարծում են, որ ես ճիշտ եմ վարվում, որովհետև այդ թեթևակի, աննշան երանդը ոչ միայն մեղմացնում է այդ անունների խորթութունը և հուղիվական դժվարութունները (մանավանդ շափածո թարգմանության մեջ), այլև տեքստը իր բոլոր հատկանիշներով հարադատ է դարձնում հայ ընթերցողի սրտին:

Ինձնից (ինչպես և մյուս թարգմանիչներից անշուշտ) շատ ժամանակ են խլում տեքստային դժվարութուններ հաղթահարելը (կնճոտ դարձվածքներ, փոխաբերական արտահայտութուններ, զուտ անգլիական ոճեր և այլն): Գրասեղանի առաջ նստած ռեկտրված թարգմանում ես և հանկարծ գրիչդ դեմ է առնում մի մեծ խուժի: Երբեմն այդ խուժքը տեղից հանելը ոչ թե ժամեր, այլ օրեր և նույնիսկ շաբաթներ է խլում: Դիմում ես շեքսպիրյան բառարաններին, թերթում ես դիցաբանական և կրոնական մատյանները, օգնության ես կանչում ռուս և օտարազգի տարբեր թարգմանիչներին, մինչև վերջապես հաջողվում է դժվարութունը հաղթահարել:

Սակայն լինում են այսպես ասած «դավաճան տողեր», երբ իմաստը պարզ է, բայց տողը չի ստացվում, բառերը չեն նստում իրենց տեղը: Մի քանի տարբերակ ես անում դարձյալ ջո սրտովը չի. մի տեղ պատկերը չի ստացվում, մի այլ տեղ տողի հուղական շունչն է պակաս, մի ուրիշ անգամ հոմանիշն է անհաջող ընտրված, կամ տեսնում ես, որտեղից որտեղ, տողի ամբողջ երկարությամբ, ձգվել է աշխարհագրական մի երկար անուն (կամ գործող անձի անուն), նեղացնելով նախադասության մյուս անդամների տեղը, շատերին էլ գլորելով ներքև: Աղմուկ է բարձրանում: Այդ ժամանակ է, որ դու գրիչը ցած դնելով հուզված շրջում ես սենյակում, մտազբաղ նայում ես պատուհանից դուրս և հանկարծ փայլատակում է միտքդ, տողը կառուցվում է աչքերիդ առաջ, և դու գրասեղանի մոտ վազելով լռեցնում ես նրանց աղմուկը, ամեն մեկին նստեցնելով իր տեղը: Եվ դրանից թե Շեքսպիրն է գոհ մնում, թե դու և թե ջո ընթերցողը:

Ինձ հետ այդպիսի պահեր շատ են եղել, բայց դրանք եղել են նաև երջանիկ պահեր, որովհետև իմ զրուցակիցը եղել է Շեքսպիրը:

Իմ թարգմանութունների մեջ էլ կան տապալված ծառեր, որոնք դժվարացնում են անցումը և գուցե դրանք շատ են, բայց ես աշխատում եմ, որ իմ անտառը շնչի ամբողջ գեղեցկությամբ ու բուրով:

վերևում ասացի, որ դժվարությունների դեպքում ես դիմում եմ նաև ուստական թարգմանություններին: Ամբողջ աշխարհին հայտնի են Մարշալի, Պաստեռնակի, Լոդինսկու և այլոց Շեքսպիրից կատարած սքանչելի թարգմանությունները: Սակայն որքան էլ թարգմանիչը ինքնատիպ լինի և հեղինակավոր, այնուամենայնիվ, թույլատրելի չէ քմահաճորեն վարվել Շեքսպիրի հետ: Հյուզոն բողոքում էր, շինի թե որևէ թարգմանիչ համարձակվի որևէ բառ պակասեցնել կամ ավելացնել Շեքսպիրի տեքստին: Բայց ահա Պաստերնակը շատ քմահաճ է վարվում բնագրի հետ: Նա դեն է նետում ամբողջական տողեր, աշխարհագրական և դիցարանական մի շարք անուններ, առանձին երկրների անուններ. օրինակ՝ Միդիա, Միջագետք (Media, Mesopotamia) (տե՛ս «Անտոնիոս և Կլեոպատրա», ար. III, տես. 1), Լիխաս (Lichas) (նույն տեղը, ար. I, տես. 2): Դրուժինինը «Ռիչարդ Նորրոդի» մեջ «բո պիղժ կոկորդով ստում ես դու» և տողը թարգմանել է нег, лжешь ты. (տե՛ս «Ռիչարդ Նորրոդ», ար. I, տես. 1):

Ինքս խստորեն դեմ եմ լուսանկարչությանը՝ թարգմանության մեջ, բայց մի՞թե Շեքսպիրի տեքստերից պատմական երկրները աշխարհագրական և դիցարանական անունները դուրս նետելը, հեղինակի պատկերավոր խոսքը մի սովորական խոսքով արտահայտելը, կամ ամբողջական տողեր դուրս թողնելը լուսանկարչական մանրուք է:

Ես անձամբ շատ բարձր եմ գնահատում ուսա թարգմանիչներին: Հատուկ հարգանք ունեմ ուսա նշանավոր շեքսպիրագետների՝ Դինամովի, Մ. Մորոզովի, Ա. Սմիրնովի և իմ սիրելի դասախոս Ալեքսանդր Անիկստի նկատմամբ, որոնք վերջին մի քանի տասնամյակում հսկայական ներդրում են կատարել շեքսպիրագիտության մեջ:

Ես ուզում եմ, որ Շեքսպիրի սովետական շրջանի թարգմանությունները մի քանի պլսով բարձր լինեն նախասովետական շրջանի թարգմանություններից, խիստ համահնչյուն լինեն բնագրին: Մենք, հայերս, ունենք բնագրից թարգմանելու մեր 1500 տարվա դասական թարգմանության ավանդները և ընթանում ենք այդ ճանապարհով: Մեր եղբայրական մի քանի ժողովուրդները, ինչպես, օրինակ, վրացիները, ուկրաինացիները և էստոնացիները նույնպես բնագրից են թարգմանում: Սակայն կան ժողովուրդներ, որոնք կազրեր շունենալու պատճառով Շեքսպիրին թարգմանում են ռուսերենից: Ահա թե ինչու ուսա սովետական թարգմանիչների դերն ու պատասխանատվությունը ավելի է մեծանում: Նրանք պետք է աշխատեն, որքան կարելի է, հարազատ մնալ բնագրին, որովհետև թարգմանությունից թարգմանվելու դեպքում բնագրի համեմատությամբ կորուստը դառնում է կրկնակի:

Միզուցե ինձ չի վերապահվում, բայց համարձակվում եմ ասել, որ ոտանավորի այն շափը, որ մինչև այժմ կիրառված է ուսև թարգմանիչների կողմից՝ Շեքսպիրի շափածոյի համար, իմ կարծիքով, բավական նեղ շափ է: Արդյոք հնարավոր չէ՞ մի նոր շափ որդեգրել, ինչպես արեց այդ Հովհաննես Մասեհյանը՝ կոտրելով հայկական թարգմանության տաղաչափական հին տրադիցիան և Շեքսպիրի մտքերը դնելով ավելի տարածուն տողերի մեջ:

Մեր աչքի առաջ կատարվում է մի շատ հետաքրքիր երևույթ: Շեքսպիրի երկերը հնչելով ժամանակակից լեզուներով, նրանց ներգործության ուժը դառնում է ավելի զորեղ (իմ խոսքը անշուշտ հաջող թարգմանությունների մասին է): Նոր սերունդները անհամեմատ բախտավոր են, որ Շեքսպիրին կարդում են իրենց մայրենի լեզվով, մինչդեռ իրենք անգլիացիները նրան կարդում են մի արդեն բավական հնացած լեզվով, որ թեև Շեքսպիրին է, բայց դժվարամարս է անգլիախոս նոր սերունդների համար: Եվ արդեն ձայներ են լսվում այն մասին, որ անգլիացիները Շեքսպիրին թարգմանեն արդի անգլերենով, այդ ազամանդի վրայից զգուշությամբ թափ տալով այն լեզվական փոշին, որ մոտ 400 տարվա նստվածք է տվել: Բայց արդյոք դա հնարավոր է:

Շեքսպիրին թարգմանելը հերկուեսյան աշխատանք է, բայց և որքան մեծ բավականություն է զգում թարգմանիչը այդ աշխատանքի մեջ:

Մասեհյանը իր դիվանագիտական մեծ աշխատանքի համար արժանացել էր «խան» տիտղոսին: Կա նրա մի հայտնի լուսանկարը, պարսկական լիազոր-դեսպանի փայլուն համազգեստով, կուրծքը շքանշաններով զարդարված: Բայց այդ եռանդուն գործիչը մեռավ խարբինի հիվանդանոցում մենակ, առանց որևէ մեկի ներկայության: Ավելին. Տոկիոյի ֆրանսիական հյուպատոսը որոշում է Մասեհյանին հողին հանձնել մահմեդական ծեսով, կարծելով թե նա մահմեդական է, որովհետև նրա անձնագրում գրված էր «H. K. Mossahed»: Այսպիսով, Մասեհյանի «խան» տիտղոսը պղպշակի պես ցնդեց՝ դիպչելով «Համլետի» սուսերի ծայրին: Եվ նա այժմ Հայաստանում և Հայաստանից դուրս հայտնի է իբրև Շեքսպիրի երկերի փայլուն թարգմանիչ, և ոչ թե իբրև Իրանի Շահի լիազոր դեսպան Բեռլինում, Լոնդոնում և Տոկիոյում:

Ես Շահի ոսկերչագետի զավակ չեմ. մի հասարակ հովվի որդի եմ, ծնված Սասունում, Հայկական Տավրոսի լանջերին (Արևմտյան Հայաստան): Ոչ մի տիտղոս չունեմ, դիվանագետ էլ չեմ եղել, բայց՝ ահա քսանհինգ տարուց ավելի է, որ Շեքսպիր եմ թարգմանում, շարունակե-

լով Մասեհյանի և մեր մյուս երախտավոր թարգմանիչների անավարտ գործը: Եվ դա ինձ համար մեծ պատիվ է:

Եթե ինձ հարցնեն, թե Շեքսպիրը թարգմանելիս ևս ամենից շատ ինչի մասին եմ մտածում, ևս անկեղծորեն կասեմ՝ իմ ծննդավայրի մասին, Սառունի և Հալիսիան Տալրոսի մասին, այն երկրի մասին, որտեղ ապրել են իմ պապերը, մեր ամբողջ ժողովուրդը Բաթմանա շրից մինչև Անիի ավերակները: Շեքսպիր թարգմանելու դժվարությունները չեն, որ տանջում են ինձ, այլ իմ բնագրաված ծննդավայրի մորմուքը: Շեքսպիրի նկարագրած երկրները և նրա ստեղծած կերպարները ինձ շարունակ հիշեցնում են իմ հեռավոր երկիրը և նրա պատմական հերոսներին:

Կարող եմ ասել, որ այդ փոթորկաշունչ անդլիացին մեր ժողովրդին ավելի է օգնել, քան թե նույն կղզու որե՛կ պետական գործիչ, ներառյալ նաև Գլադստոնը: Շեքսպիրի գրվածքները միշտ եղել են մեր ժողովրդի անբաժան ուղեկիցները, նրանք խնդացել և լացել են մեր ժողովրդի հետ: Մոտ 150 տարի է, որ նրանք փոթորկում են մեր բեմերը, մեր սիրտը, մեր հոգին:

«Պատճառ ունինք հավատալու, — ասել է Մասեհյանը Լոնդոնում 1916 թվին Շեքսպիրի մահվան 300-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում, — որ Շեքսպիրը երեք դար եվրոպական աշխարհը տիրապետելուց հետո, հաջորդ դարին իր հանճարի կնիքն է դրոշմելու Արևելքի մաս՝ ծելակերպի վրա, բանդի Շեքսպիրը մի շրջանի համար չի գրել, այլ բուրբ ժամանակների, կամ իր խոսքով ասած՝ «դեռ չծնված ժողովուրդների և չհայտնված լեզուների համար»: